2-24 4/21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17»

ք. Երևան «22» դեկտեմբերի 2017թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N Հավելված 1.1-ում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝ ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները. բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 131 800 (մեկ հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Հուսալի Կամար» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 09811047
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 22307110119800
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արցախբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Վ. Առաքելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված N 1
«22» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1-11	71351540/1	Շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների մատուցում: **Ծառայության անվանում** Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն՝ համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի պահանջների **Տեխնիկական առաջադրանք** Ամենօրյա հսկողություն՝ շինարարական աշխատանքների կապալի պետական գնման պայմանագրով սահմանվող պարտավորությունների համաձայն: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին: Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները	դրամ	131 800	1	/Կից ներկայացվում է/	Ծառայության մատուցման ժամկետը՝ շինարարական աշխատանքների կատարման ավարտը:

		ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում: Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում: Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինարարական աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի վերաբերյալ համապատասխան հաշվետվության ներկայացում: Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման համաձայն:					

Ձեռք բերվող Ծառայության անվանումը
Շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ

N	**Անվանումը**	**Գտնվելու վայրը**
1	ՀՀ դատական դեպարտամենտի վարչական շենք. տանիքի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք.Երևան, Թբիլիսյան խճ.3/9
2	ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք.Աբովյան, Կոտայքի 8.
3	ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	Ք.Գյումրի, Անկախության հրապարակ 7.
4	Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք.	Ք.Երևան, Նազարբեկյան թաղամաս 40.

	ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	
5	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. տանիքի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք. Երևան, Օտյան փողոց 53/2.
6	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. Պոեսգրանիտե հատակների վերանորոգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք.Երևան, Հրաչյա Ներսիսյան 10.
7	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենք. էլեկտրափականների վերանորոգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23.
8	Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. տանիքի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք.Երևան, Գյուլիքևխվյան 20 փողոց.
9	Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. տանիքի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 փողոց.
10	ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. Ներքին ջեռուցման ցանցի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք. Թալին, Խանջյան 13.
11	ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենք. Ներքին ջեռուցման ցանցի վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ:	ք.Էջմիածին, Կամոյի 15.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հուսալի Կամար» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
ՀՎՀՀ՝ 09811047
Հ/Հ՝ 22307110119800
«Արցախբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Առաքելյան

(ստորագրություն)

Հավելված թիվ 1.1
«22» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Այլումինե կաղապարով ապակյա վիտրաժ ձայնամեկուսիչ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	5 տարի
2	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով եռաշերտ թրծված ապակիով ձայնամեկուսիչ շերտով դուռ 2,2x0,9մ-1հատ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	5 տարի

ՀՀ Երևան քաղաքի Մալաթյա-Սեբաստյա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Տանիքածածկի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ.	քմ	Պրոֆիլավոր թիթեղ ԿՊ-35-0,50 մմ	10 տարի
2	Ջրհորդանների փոխարինում /Жолоб/	հատ	Ջրհորդանների փոխարինում	5 տարի
3	Տանիքի ջրընդունիչի /Ձագար/ փոխարինում	հատ	Տանիքի ջրընդունիչի	5 տարի
4	գաջի ավաղի իրականացում	քմ	Պատերի գաջի սվաղ լավորակ	3 տարի
5	Պատերի ներկում	քմ	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածիկապատմամբ	3 տարի

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Հատակի պատրաստում	քմ	Հատակի պատրաստում արհեստական գրանիտե սալերից /մամլոգրանիտ/	5 տարի
2	Տանիքաածածկի պատրաստում	քմ	Տանիքաածածկի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ.	10 տարի
3	ջրընդունիչփոխարինում	հատ	Տանիքի ջրընդունիչի /ձագար/ փոխարինում	5 տարի

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երեք տարի				
հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքայի և ժամկետ
1	Պոլիպրոպիլենե խողովակների և ձևավոր մասերի	գծմ	Պոլիպրոպիլենե խողովակների և ձևավոր մասերի տեղադրում փորձարկումով, լվացում և ախտահանում D25մմ	10 տարի
2	Լվացարան և Զուգարանակոնք	հատ	Լվացարանի և Զուգարանակոնքի /լվացման տակառիկով/ տեղադրում	5 տարի

ՀՀ Երևան քաղաքի դատական դեպարտամենտի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքայի և ժամկետ
1	Կավարամածի պատրաստում	քմ	Կավարամածի պատրաստում /ավելացում/	10 տարի
2	ջրընդունիչի փոխարինում	հատ	Տանիքի ջրընդունիչի /ձագար/ փոխարինում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ.	5 տարի
3	Տանիքածածկի պատրաստում	հատ	Տանիքածածկի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ.	10 տարի

ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր-նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	գաջի սվաղի իրականացում	քմ	գաջի սվաղ լավորակ	5 տարի
2	լատեքսային ներկում	քմ	լավորակ լատեքսային ներկում համատարած մածիկապատմամբ	3 տարի
3	ջրընդունիչի փոխարինում	հատ	Տանիքի ջրընդունիչի /ձագար/ փոխարինում	5 տարի
4	Ջրահեռացման խողովակի տեղադրում	հատ	Ջրահեռացման խողովակի տեղադրում	5 տարի

ՀՀ Երևան քաղաքի վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Էլեկտրափականների մոնտաժում	հատ	Էլեկտրափականների մոնտաժում	5 տարի

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երեք տարի				
հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	գաջի սվաղի իրականացում	քմ	գաջի սվաղ լավորակ	5 տարի
2	լատեքսային ներկում	քմ	լավորակ լատեքսային ներկում համատարած մածիկապատմամբ	3 տարի

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ երեք տարի				
հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	Տանիքածածկի պատրաստում	քմ	Տանիքածածկի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ.	10 տարի
2	Ալյումինե բլոկով դռան տեղադրում	քմ	Ալյումինե բլոկով սպիտակ 60մմ հաստ.ջերմակամրջակով ապակեփաթեթով 4+4մմ դռան տեղադրում	5 տարի
3	Պատի երեսապատում ալիքաբոնդով	հատ	Պատի երեսապատում ալիքաբոնդով	10 տարի
4	Պլաստմասե կախովի առաստաղ	հատ	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հինգակմախքի պատրաստումով.	3 տարի

ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	մանրահատակի հղկում	քմ	Առկա մանրահատակի հղկում	3 տարի
2	ներկման ասֆալտանքներ	քմ	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածիկապատմամբ	3 տարի
3	մետալլաստե բլոկով կաղնագույն 60մմ հաստ դռան տեղադրում	հատ	մետալլաստե բլոկով կաղնագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 խուլ դռան տեղադրում 1,75x2,9մ - 1հատ 1,35x1,85մ - 1 հատ	5 տարի

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ

հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. Բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1	գաջի սվաղի իրականացում	քմ	գաջի սվաղ լավորակ	3 տարի
2	ներկման ասֆալտանքներ	քմ	լավորակ լատեքսային ներկում համատարած մածիկապատմամբ	3 տարի
3	Տանիքի ջրընդունիչի /ձագար/ փոխարինում	հատ	Տանիքի ջրընդունիչի /ձագար/ փոխարինում	5 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս

ՀՎՀՀ՝ 09811047

Հ/Հ՝ 22307110119800

«Արցախբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Առաքելյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«29» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժինների համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
1-11	71351540/1	Շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայություններ	131 800	**131 800**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հուսալի Կամար» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
ՀՎՀՀ՝ 09811047
Հ/Հ՝ 22307110119800
«Արցախբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Առաքելյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » դեկտեմբերի 2017 թ. կնքված
«ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » դեկտեմբերի 2017 թ. կնքված
«ԴԴ-ՄԱ-ԾՁԲ-10/17» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն